

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

Ի ՎԱՐՉՈՒԹԵՆԷ ՃԵՄԱՐԱՆԻ

1. Բնութիւնը ընդունելութեան յաշակերտութիւն ճեմարանի Մայր Աթոռոյս Սրբոյ Էջմիածնի կատարին մի անգամ և եթ ի տարւոջ և այն աւուրբք ինչ յառաջ քան զսկիզբն ուսումնական տարւոյ:

2. Յանկացողք մտանել յաշակերտութիւն ճեմարանիս մատուցեն ինչդիր յանուն Ա ԵՏափառ Աթուղիկոսին, ոչ անագան քան զմին Յուլիս ամսոյ:

3. Ընդ ինչրագրին պարտէ առաջի առնել զվկայագիրս ուսման, բարի վարուց, ծննդեան և մկրտութեան և պատուաստման ծաղկի:

4. Կորեկ աշակերտք և ուսանողք զնին ի բժշկէ ճեմարանիս, որ և տայ Տեսչին զգրաւոր տեղեկութիւն զառողջութենէ նոցա:

5. Ի դպրոցական դասարանս ընկալեալ լինին առհասարակ ուսեալքն ի վարժարանս և կամ հրահանգեալքն առտնին կրթութեամբ, իսկ յառաջին լսարան ճեմարանիս՝ նոքա միայն, որք ունին վկայագիր աւարտման դպրոցական դասընթացից:

6. Յետ կանոնաւոր հարցաքննութեան ընկալցին յաշակերտութիւն յամենայն դասարանս ճեմարանիս. իսկ վասն մտանելոյ յԱռաջին լսարան՝ ենթարկեցին հարցաքննութեան յայն յամենայն աւարկայս՝ զորս կարևոր համարիցի Աւսումնական Խորհուրդն:

Ծանօթն-Ի-Ն. Ա ասն մտանելոյ յԳ. դասարան պահանջի անթերի գիտութիւն դասընթացից երէրասեան եկեղեցական ծխական ուսումնարանաց. իսկ վասն մտանելոյ իմիւս դասարանս աշակերտք պարտին քննիլ ըստ ծրագրի հաստատելոյ ի Ա ԵՏափառ Աթուղիկոսէն, ի պէտս ԵՏափառ դպրոցաց:

7. Յանկացողք մտանել յԱռաջին լսարան

Ղեմարանիս վկայագրով աւարտման դպրոցական դասընթացից, վերստին ունին ենթարկիլ հարցաքննութեան յամենայն առարկայս, եթէ զինքն անարժան չի հայտնուիլ եւ չի վերայ առաւել ասն դաս յի:

8. Յետ հարցաքննութեան ընկալեալ լեցին ի շարս աշակերտաց՝ որք արժանաւոր դատիցին յՈւսումնական Խորհրդոյն:

Ծանօթութիւն. Պահանջի՝ զի ընկալեալքն յաշակերտութիւն՝ լեցին ուշեմք, երկարոգիք, փափկաձայնք, բարեկազմք և բարեբարոյք:

9. յԳ. դասարան Ղեմարանին ընկալեալ լեցին պատանիք 14—16 ամեայ, և ըստ այսմ համեմատութեան ի յաջորդ դասարանս:

10. Աշակերտք Ղեմարանի գիշերօթիկք են ամենբեան, թէ ճրիավարժքն և թէ թոշակատուքն, որք ստանան զուսումն, սնունդ, հագուստ և զամենայն առողջապահական խնամս:

11. Թիւ ճրիավարժից, որ ի հաշիւ Սայր Աթոռոյս, որոշի ամ ըստ ամէ, ըստ բարեհաճ կարգադրութեան Վեհափառ կաթողիկոսի:

12. Աշակերտեալքն պարտին կանխաւ մատուցանել ի գրաւ՝ յայսկոյս կովկասեանք 50 ռուբլիս, իսկ եկեալքն յայլոց վիճակաց Ռուսաստանի կամ ի տար աշխարհաց՝ ռուբլիս 75, որպէս զի հատուցի այդ ի ծախս վերադարձի նոցա ի հայրենիս, և ս և ի զին կորուսեալ և վատնեալ գրենոյ, հանդերձեղենաց և այլոց իրեղենաց:

13. Իւրաքանչիւր թոշակատու վճարեսցէ ի տարին ռուբլիս 200, ի կրկին նուագս ի Սեպտեմբեր և ի Յունուար ամիսս:

14. Եթէ թոշակատու ոք ելցէ կամ արձակիցի մինչև բոլորեալ ուսումնական կիսամեկին, գրաւական նորա ոչ դարձուցի յետս:

15. Յամառնային արձակուրդս, եթէ ծնողք կամ բարերարք կամիցին տանել զորդիս իւրեանց ի հայրենիս, ծախք երթևեկութեանց նոցա լեցին ի ծնողաց կամ ի բարերարաց: